ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ

ք. Երևան «07» 05 2018թ.

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Գ. Մխեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **6 765 516** (վեց միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար հինգ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Աժ աշխատակազմ	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՎՀՀ 00008519	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ16600000446270100
Հ/Հ 900011020089	ՀՎՀՀ 00861057
ՀՀ Աժ աշխատակազմի	էլ.փոստ corp@patron.am
ղեկավարի առաջին տեղակալ	Կ. Սուրիսյան
Գ. Մխեյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«07» 05 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը*
1	30237340/2	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP CE278A (№78A)	հատ	35280	352800	10	ՀՀ ԱԺ թ. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	10	II եռամսյակ
2	30237340/3	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP CB345A (№35A)	հատ	30576	458640	15		15	II եռամսյակ
3	30237340/4	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP CE285A (№85A)	հատ	32340	970200	30		30	II-րդ եռ. 20 հատ III-րդ եռ. 10 հատ
4	30237340/5	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP CF283A (№83A)	հատ	29400	882000	30		30	II-րդ եռ. 20 հատ III-րդ եռ. 10 հատ
5	30237340/6	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP Q2612A (№12A)	հատ	35280	352800	10		10	II եռամսյակ
6	30237340/7	Քարթրիջներ HP	Hewelett-Packard ԱՄՆ	Քարթրիջ HP CF280A (№80A)	հատ	48990	391920	8		8	II եռամսյակ
7	30237340/8	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP Q2610A (№10A)	հատ	51960	103920	2		2	II եռամսյակ

8	30237340/9	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ֆրանսիա	Քարթրիջ HP C4096A (№96A)	հատ	42990	85980	2		2	II եռամսյակ
10	30237340/11	Քարթրիջներ Canon	Canon Ճապոնիա	Քարթրիջ Canon 737	հատ	42498	212490	5		5	II եռամսյակ
11	30237340/12	Քարթրիջներ Canon	Canon Ճապոնիա	Քարթրիջ Canon 712/312	հատ	28812	288120	10		10	II եռամսյակ
12	30237340/13	Քարթրիջներ Canon	Canon Չինաստան	Քարթրիջ Canon 703/303/103	հատ	28998	347976	12		12	II-րդ եռ. 8 հատ III-րդ եռ. 4 հատ
15	30237340/16	Քարթրիջներ Xerox	Xerox Չինաստան	Xerox 0006R1182, Xerox Workcentre Pro 128 պատճենահանող մեքենայի համար:	հատ	61890	123780	2		2	II եռամսյակ
16	30237340/17	Քարթրիջներ Xerox	Xerox Չինաստան	Xerox Drum 013R00588 Drum Unit, Xerox Workcentre Pro 128 պատճենահանող մեքենայի համար, ռեսուրսը 60000 5% էջ,	հատ	127590	127590	1		1	II-եռամսյակ
44	30237411/1	մկնիկ համակարգչային, լարով Genius	Genius Չինաստան	Բազմաֆունկցիոնալ մկնիկ, DX-180, USB, 1000 dpi, անիվով, օպտիկական, ստեղների քանակը՝ 3, չափերը՝ 67 x 39 x 102 մմ, լարով, լարի երկարությունը 1,5 մետր, գույնը՝ սև, երաշխիքային ժամկետ՝ 6 ամիս:	հատ	3250	97500	30		30	II-րդ եռ. մինչև մայիսի 20-ը 15 հատ III-րդ եռ. 15 հատ
51	30237310/1	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP LJ CF230A (№30A) սև HP LJ Pro MFP M227 sdn տպիչի համար	հատ	36750	1470000	40		40	II-եռամսյակ, մինչև մայիսի 20-ը
52	30237310/2	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Վյետնամ	DRUM Քարթրիջ HP LJ CF232A (№32A) HP LJ Pro MFP M227 sdn տպիչի համար	հատ	49980	499800	10		10	II-եռամսյակ, մինչև մայիսի 20-ը

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա սեպտեմբերի 30-ը: Ապրանքը պետք է ունենա որակի սերտիֆիկատ եթե կիրառելի է:*

**Բոլոր մատակարարվող ապրանքները պետք է ունենան համապատասխան արտադրող ընկերության կողմից տրված որակավորման փաստաթուղթ սերտիֆիկատ, երաշխավորված մեկ տարի պահպանման ժամկետ, իսկ քարթրիջները՝ նաև իսկությունը ստուգելու հնարավորություն և պաշտպանված հոլոգրաֆիկ պիտակ:*
**Այն չափաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման*

երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է ***«կամ համարժեք»*** *արտահայտությունը:*
**Բոլոր քարթրիջները պետք է լինեն գործարանային փակ տուփերով և արտադրված ոչ վաղ քան 2017թ. 4-րդ եռամսյակը և համապատասխանեն ISO / IEC ստանդարտներին:*
** Յուրաքանչյուր 3 քարթրիջից մեկը՝ պատվիրատուի կամայական ընտրությամբ, կարող է ենթարկվել փորձարկման՝ սույն տեխնիկական բնութագրին համապատասխանությունը ստուգելու համար: Քարթրիջի փորձարկումը պատվիրատուն իրավունք ունի իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան փորձաքննության միջոցով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057
էլ. փոստ corp@patron.am
Կ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«07» 05 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30237340/2	Քարթրիջներ	-	-	-	-	88200	88200	176400	176400	176400	352800	352800	352800	**352800**
2	30237340/3	Քարթրիջներ	-	-	-	-	114660	114660	229320	229320	229320	458640	458640	458640	**458640**
3	30237340/4	Քարթրիջներ	-	-	-	-	242550	242550	485100	485100	485100	970200	970200	970200	**970200**
4	30237340/5	Քարթրիջներ	-	-	-	-	220500	220500	441000	441000	441000	882000	882000	882000	**882000**
5	30237340/6	Քարթրիջներ	-	-	-	-	88200	88200	176400	176400	176400	352800	352800	352800	**352800**

6	30237340/7	Քարթրիջներ	-	-	-	-	97980	97980	195960	195960	195960	391920	391920	391920	**391920**
7	30237340/8	Քարթրիջներ	-	-	-	-	25980	25980	51960	51960	51960	103920	103920	103920	**103920**
8	30237340/9	Քարթրիջներ	-	-	-	-	21495	21495	42990	42990	42990	85980	85980	85980	**85980**
10	30237340/11	Քարթրիջներ	-	-	-	-	53122.5	53122.5	106245	106245	106245	212490	212490	212490	**212490**
11	30237340/12	Քարթրիջներ	-	-	-	-	72030	72030	144060	144060	144060	288120	288120	288120	**288120**
12	30237340/13	Քարթրիջներ	-	-	-	-	86994	86994	173988	173988	173988	347976	347976	347976	**347976**
15	30237340/16	Քարթրիջներ	-	-	-	-	30945	30945	61890	61890	61890	123780	123780	123780	**123780**
16	30237340/17	Քարթրիջներ	-	-	-	-	31897.5	31897.5	63795	63795	63795	127590	127590	127590	**127590**
44	30237411/1	մկնիկ համակարգչային, լարով	-	-	-	-	24375	24375	48750	48750	48750	97500	97500	97500	**97500**

51	30237310/1	Քարթրիջներ	-	-	-	-	367500	367500	735000	735000	735000	1470000	1470000	1470000	**1470000**
52	30237310/2	Քարթրիջներ	-	-	-	-	124950	124950	249900	249900	249900	499800	499800	499800	**499800**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՀՀ Աժ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ Աժ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057
էլ. փոստ corp@patron.am
Կ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 07 » 05 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«07» 05 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
07.05.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ ծածկագրով պետական գնման պայմանագրի

ք.Երևան «19» 05 2018թ.

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Գ. Մխեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 07.05.2018թ. կնքված ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել ապրանքների 2-րդ եռամսյակի մատակարարման ժամկետը մինչև հունիսի 3-ը:

1.2 Պայմանագրի N1 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N1 հավելվածի:

1.3 Պայմանագրի N2 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N2 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 07.05.2018թ. կնքված ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ ծածկագրով պետական գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 9 էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1, N 2 հավելվածները, համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՎՀՀ 00008519	<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1660000446270100
Հ/Հ 900011020089	ՀՎՀՀ 00861057
ՀՀ ԱԺ աշխատակազմի	էլ. փոստ corp@patron.am
ղեկավարի առաջին տեղակալ	Կ. Սուքիասյան
Գ. Մխեյան	
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
07 մայիսի 2018 թ. կնքված
N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ պայմանագրի
« 19 » « 05 » 2018 թ. կնքված N1 համաձայնագիր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը*
1	30237340/2	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP CE278A (№78A)	հատ	35280	352800	10	ՀՀ ԱԺ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	10	II եռամսյակ
2	30237340/3	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP CB345A (№35A)	հատ	30576	458640	15		15	II եռամսյակ
3	30237340/4	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP CE285A (№85A)	հատ	32340	970200	30		30	II-րդ եռ. 20 հատ III-րդ եռ. 10 հատ

4	30237340/5	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP CF283A (№83A)	հատ	29400	882000	30	ՀՀ ԱԺ թ. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	30	II-րդ եռ. 20 հատ III-րդ եռ. 10 հատ
5	30237340/6	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP Q2612A (№12A)	հատ	35280	352800	10		10	II եռամսյակ
6	30237340/7	Քարթրիջներ HP	Hewelett-Packard ԱՄՆ	Քարթրիջ HP CF280A (№80A)	հատ	48990	391920	8		8	II եռամսյակ
7	30237340/8	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP Q2610A (№10A)	հատ	51960	103920	2		2	II եռամսյակ
8	30237340/9	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ֆրանսիա	Քարթրիջ HP C4096A (№96A)	հատ	42990	85980	2		2	II եռամսյակ
10	30237340/11	Քարթրիջներ Canon	Canon Ճապոնիա	Քարթրիջ Canon 737	հատ	42498	212490	5		5	II եռամսյակ
11	30237340/12	Քարթրիջներ Canon	Canon Ճապոնիա	Քարթրիջ Canon 712/312	հատ	28812	288120	10		10	II եռամսյակ
12	30237340/13	Քարթրիջներ Canon	Canon Չինաստան	Քարթրիջ Canon 703/303/103	հատ	28998	347976	12		12	II-րդ եռ. 8 հատ III-րդ եռ. 4 հատ

15	30237340/16	Քարթրիջներ Xerox	Xerox Չինաստան	Xerox 0006R1182, Xerox Workcentre Pro 128 պատճենահանող մեքենայի համար:	հատ	61890	123780	2	ՀՀ ԱԺ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	2	II եռամսյակ
16	30237340/17	Քարթրիջներ Xerox	Xerox Չինաստան	Xerox Drum 013R00588 Drum Unit, Xerox Workcentre Pro 128 պատճենահանող մեքենայի համար, ռեսուրսը 60000 5% էջ,	հատ	127590	127590	1		1	II-եռամսյակ
44	30237411/1	մկնիկ համակարգչային, լարով Genius	Genius Չինաստան	Բազմաֆունկցիոնալ մկնիկ, DX-180, USB, 1000 dpi, անիվով, օպտիկական, ստեղների քանակը՝ 3, չափերը՝ 67 x 39 x 102 մմ, լարով, լարի երկարությունը 1,5 մետր, գույնը՝ սև, երաշխիքային ժամկետ՝ 6 ամիս:	հատ	3250	97500	30		30	II-րդ եռ. մինչև հունիսի 3-ը 15 հատ III-րդ եռ. 15 հատ
51	30237310/1	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Ճապոնիա	Քարթրիջ HP LJ CF230A (N°30A) սև HP LJ Pro MFP M227 sdn տպիչի համար	հատ	36750	1470000	40		40	II-եռամսյակ, մինչև հունիսի 3-ը
52	30237310/2	Քարթրիջներ HP	Hewelett-Packard Վյետնամ	DRUM Քարթրիջ HP LJ CF232A (N°32A) HP LJ Pro MFP M227 sdn տպիչի համար	հատ	49980	499800	10		10	II-եռամսյակ, մինչև հունիսի 3-ը

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 5 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից:Ապրանքը պետք է ունենա որակի սերտիֆիկատ եթե կիրառելի է:

**Բոլոր մատակարարվող ապրանքները պետք է ունենան համապատասխան արտադրող ընկերության կողմից տրված որակավորման փաստաթուղթ սերտիֆիկատ, երաշխավորված մեկ տարի պահպանման ժամկետ, իսկ քարթրիջները՝ նաև իսկությունը ստուգելու հնարավորություն և պաշտպանված հոլոգրաֆիկ պիտակ:*

**Բոլոր քարթրիջները պետք է լինեն գործարանային փակ տուփերով և արտադրված ոչ վաղ քան 2017թ. 4-րդ եռամսյանկը և համապատասխանեն ISO/IEC ստանդարտներին:*

** Յուրաքանչյուր 3 քարթրիջից մեկը՝ պատվիրատուի կամայական ընտրությամբ, կարող է ենթարկվել փորձարկման՝ սույն տեխնիկական բնութագրին համապատասխանությունը*

սպուգելու համար: Քարտրիջի փորձարկումը պատվիրատուն իրավունք ունի իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան փորձաքննության միջոցով:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՎՀՀ 00008519	<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1660000446270100
Հ/Հ 900011020089	ՀՎՀՀ 00861057
ՀՀ ԱԺ աշխատակազմի	էլ. փոստ corp@patron.am
ղեկավարի առաջին տեղակալ	Կ. Սուքիասյան
Գ. Մխեյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
07 մայիսի 2018 թ. կնքված
N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՊԱՏ պայմանագրի
« 19 » « 05 » 2018 թ. կնքված N1 համաձայնագիր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30237340/2	Քարթրիջներ	-	-	-	-	-	88200	176400	176400	176400	352800	352800	352800	**352800**
2	30237340/3	Քարթրիջներ	-	-	-	-	-	114660	229320	229320	229320	458640	458640	458640	**458640**
3	30237340/4	Քարթրիջներ	-	-	-	-	-	242550	485100	485100	485100	970200	970200	970200	**970200**
4	30237340/5	Քարթրիջներ	-	-	-	-	-	220500	441000	441000	441000	882000	882000	882000	**882000**

5	30237340/6	Բարձրակարգ	-	-	-	-	-	30945	61890	61890	123780	123780	123780	123780	352800	352800	352800
6	30237340/7	Բարձրակարգ	-	-	-	-	-	86994	173988	173988	347976	347976	347976	347976	391920	391920	391920
7	30237340/8	Բարձրակարգ	-	-	-	-	-	72030	144060	144060	288120	288120	288120	288120	103920	103920	103920
8	30237340/9	Բարձրակարգ	-	-	-	-	-	53122.5	106245	106245	212490	212490	212490	212490	85980	85980	85980
10	30237340/11	Բարձրակարգ	-	-	-	-	-	21495	42990	42990	85980	85980	85980	85980	212490	212490	212490
11	30237340/12	Բարձրակարգ	-	-	-	-	-	25980	51960	51960	103920	103920	103920	103920	85980	85980	85980
12	30237340/13	Բարձրակարգ	-	-	-	-	-	97980	195960	195960	391920	391920	391920	391920	352800	352800	352800
15	30237340/16	Բարձրակարգ	-	-	-	-	-	88200	176400	176400	352800	352800	352800	352800	391920	391920	391920

16	30237340/17	Քարթրիջներ	-	-	-	-	-	31897.5	63795	63795	63795	127590	127590	127590	**127590**
44	30237411/1	մկնիկ համակարգչային, լարով	-	-	-	-	-	24375	48750	48750	48750	97500	97500	97500	**97500**
51	30237310/1	Քարթրիջներ	-	-	-	-	-	367500	735000	735000	735000	1470000	1470000	1470000	**1470000**
52	30237310/2	Քարթրիջներ	-	-	-	-	-	124950	249900	249900	249900	499800	499800	499800	**499800**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057
էլ. փոստ corp@patron.am
Կ. Սուքիասյան

/ստորագրություն/

Կ.Տ